



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

8095

891.99
p-88



22 10/2/38

495 - 10/2/38

L 6 NOV 2011

891.39

Թ- 88

Ա.Ա.

ՅԵՐՈՒԹՅԻՆ ԹՈՒՄԱՆԵՐՆՑ

№: 9095

ՀԱԶԱՐԱՆ-ԲԼԲՈՒԼ

ՑԷԷՐԻԱ

Երեք արարւածով եւ չորս սլառկերով

(Արտատպած «Առաջախից»)

1001
1614



Տպարան S. Ս. 1902

1902 ՅՈՒ 8

31959

1 9 APR 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Պատկեր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Պատկեր

Գրքի պահպանումը և հարմարությունը

Дозволено цензурою, Тифлисъ, 15-го Октября
1902 г.

1902
1901



1902

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԱՆՆԱ, Թագաւոր
ՀՐԱՆՏ, {
ՊԱՐԷՏ { Մանուկի որդիները
ՍՈՒՐԷՆ

ՈԳԻ
ՓԵՐԻ
ՈՒՐԱՐՏԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐ
ՄԻԼԳԻՍԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐ
ՄՈՒՍԱՄԻՐԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐ
ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ
ԲՐՄԵՐ
ԳՈՒՍԱՆՆԵՐ
ԶՐԲԵ
ՍՊԱՍԱԻՈՐ

Գործողութիւնը կատարուած է վառայ ծովակի
չըջակայքում հեթանոսական դարերում:

19 APR 2013

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐԻԱԺ

Մասսատան և զեղեցիաչէն ապարանք

Նրենյթ I

ՀՐԱՆՏ, ՊԱՐԷՏ, ՍՈՒՐԷՆ և զօրք

ՀՐԱՆՏ

**Արքան հրամայեց որ զիմաւորենք,
Պալատի առաջ:**

ՊԱՐԷՏ

Հետաքրքիր է,

Արդեօք եկե՛լ է Ուրարտւի արքան:

ՀՐԱՆՏ

**Ոչ, նա չի եկել. այլ ուղարկելով
Մի պատգամաւոր, շնորհաւորում է
Մեր նոր պալատը, ներումն է խնդրում
Մեր հար-արքայից, որ անկարող է
Անձամբ մասնակցել այսօրուայ մեր մեծ,
Փառաւոր տօնին:**

ՍՈՒՐԷՆ

Իսկ ինչո՞ւ ինքը
Անկարող եղաւ անձամբ մասնակցել:

ՀՐԱՆՏ

Ատրեստանցիք մտել են դարձեալ
Ուրարտի հողը, և թագաւորը
Ժողովել է իր բոլոր զօրքերը,
Դուրս եկել ռազմի արիւնոտ զաշտը:

ՊԱՐԷՏ

Մենակ է կուում:

ՀՐԱՆՏ

Ոչ, նա մենակ չէ.
Աջակցում են և նորա դաշնակից
Մուսասիբի և Միլդիսի հըզօր
Թագաւորները:

ՍՈՒՐԷՆ

Ապա ուրեմն
Նորանք էլ չեն գալ արսուրաց տօնին:

ՀՐԱՆՏ

Ոչ, նորանք էլ են ուղարկել իրանց
Պատգամաւորին:
(Լուում են շեփորների և փողերի ձայներ)

Ահա գալիս են.
Շուտով կը սկսւի շքեղ հանդէսը:

ՊԱՐԷՏ

Այ՛, կը սկսւի, եթէ որ չանկարծ
Դարձեալ որևէ մի անակնկալ
Արդեւք չը վնի:

ՍՈՒՐԷՆ

Ո՛չ, ևս չեմ կարծում...
(Մտնում են քրմերը և Մաննան իր պալատականների ու
օտարերկրեաց պատգամաւորների հետ միասին):

Երևոյթ II

ՄԱՆՆԱ, ՀՐԱՆՏ, ՊԱՐԷՏ, ՍՈՒՐԷՆ, քրմեր, պալատականներ, պատգամաւորներ և զօրքեր:

ՄԱՆՆԱ (Պատգամաւորներին)

Պատական հիւրեր, թող տուէք, որ ևս
Ներկայացնեմ ձեզ իմ որդիներին.
Ահա մեծ որդիս՝ անվախ իմ Հրանտը,
Որ իր քաջութեամբ Հալոց աշխարհում
Ժառանգել է մեծ հերոսի անուն:
Ահա և միջնակ իմ Պարէտ որդին,
Որ մեն ու մենակ՝ անտառի միջին
Ըսպանեց հարիւր ատրեստանցու,
Գետինը ներկեց կարմիր արիւնով,
Աշխարհ՝ թնդացրեց իր քաջ գործերով:
Իսկ սա իմ փոքր Սուրէն որդին է,
Ինքը ողջամիտ, քաջ ու հնարաղէտ,
Բարի, իմաստուն և ճշմարտախօս:

ՈՒՐԱՐՏԻՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Մաննա արքայի որդոց գովեստը,
Եւ լաւ համբար մենք միշտ լսել ենք:

ՄԻՂԴԻՍԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Ամբողջ Միլղիսը ըսքանչանում է
Մաննայի որդոց բարեմասնութեամբ:

Ս Ա Ն Ն Ա

Ահա գեղեցիկ իմ նորակառուց
Մեծ ապարանքը:

ՄՈՒՍԱՍԻՐԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Հիանալի է:

ՈՒՐԱՐՏԻՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Ամբողջ Ուրարտու պետութեան միջին
Ոչ մի ժամանակ զեռ չէ կառուցած
Այսպիսի շքեղ, սիրուն ապարանք:

Մ Ա Ն Ն Ա

Նայեցէք, որքան բարձր, վիթխարի,
Հսկայական են այն պարիսպները.
Տեսէք՝ թէ որքան գեղեցկաքանդակ
Ու հրաշալի են այն կամարները:

ՄՈՒՍԱՍԻՐԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Նայեցէք մարմար այն սանդուղներին,
Կանգուն, հաստատուն բարձր սիւներին,
Նայեցէք նախշուն լուսամուտներին...

Մեր Մուսասիրի պետութեան մէջ էլ
Դեռ չէ կառուցել այսպիսի պալատ:

Մ Ա Ն Ն Ա

Իսկ տեսնում էք դուք այն գոհարները,
Յակինթ ու լալը, անդին քարերը
Որոնք չորս կողմից պատերի վերայ
Շողջողում են վառ, որպէս երկինքանդ,
Գոյնզգոյն աստղեր...

ՄԻՂԴԻՍԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Որպէս հիասքանչ
Մի գեղեցկուհու վարվուռն աչեր:

ՈՒՐԱՐՏԻՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Ո՛հ, ինչ հմտութիւն, ինչ գեղեցկութիւն,
Որպիսի ճաշակ, ճարտարպետութիւն:

Մ Ա Ն Ն Ա

Իսկ ներսը, ներսը... Եթէ որ տեսնէք
Պալատիս ներսը, դուք կը սքանչանաք:
Այժմ հրամեցէք, եկէք, գնանք ներս...
Դէ, իմ սիրելի քաղցրիկ ուղիքս,
Առաջնորդեցէք անգին հիւրերին.
Մեր նորակառուց պալատի առթիւ
Սարքած ալսօրւան շքեղ հանդէսը
Թո՛ղ օրհնեն հզօր մեր աստուածները...
Դէ, թո՛ղ հաւաքեն մեր դուսանները,
Հնչեցրէք բոլոր նազաբանները...
Գնանք... (նայելով երկնքին) Բայց կացէք...
Ա՛յլը երևաց

ԱՄՆԻՔԸ (ապշած)

Ո՞ր ամպը, արքայ:

ՄԱՆՆԱ (յուսահատում)

Ան չարագուշակ

Փոթորկի մռայլ, ահաւոր ամպը,
 Որ արեւին տարի հանդիստ չէ տալիս:
 Այսօր չենք կարող գնալ ասպարանք,
 Ապարանքի մէջ կալ մի թերութիւն...
 Յետածուլում է աչսօր հանդէսը...
 Շուտով կը սկսւի ահեղ մրրիկը,
 Շուտով կը շարժեն լեռները տեղից:
 Անտառը չուղած կը տարուբերի,
 Հաստարմատ կաղնի ծառը դարաւոր
 Պիտի տապալի հողմից զօրաւոր.
 Թանձր մառախուղ կը պատի աշխարհ,
 Ասուն, անասուն կը սոսկան իսպառ...
 Նայեցէք վերև՝ ամպը թանձրացաւ,
 Ամպը սեացաւ, մթնում է երկինք,
 Խաւարում աշխարհ, մշուշը պատեց...
 Խնդրեմ գնացէք, ինձ մենակ թողէք...
 (Ամենքը ապշած հեռանում են. սկսում է քամին)

Երեսյթ III

ՄԱՆՆԱ (մենակ)

Եւ ամեն անգամ, երբ կառուցում է
 Իմ ասպարանքը, նա երևում է.
 Քամին սաստկացաւ, խռոնակուեց աշխարհ.
 Ահա երկինքը սեացաւ իսպառ,

Գոռում են ամպեր, չարժևում է երկիր...
 (Փոթորիկ)

Նա հիմա կը գայ, հիմա կերեայ,
 Եւ ամեն անգամ կայծակ, փոթորիկ...
 Գարշելի, զաղի, դու ժանտ ձերունի,
 Դու ստուերի նման լայտնում ես լանկարծ,
 Եւ ստուերի նման չքանում իսկոյն:
 Դու երկու անգամ ինձ քանդել տւիր
 Իմ շքեղ տունը, չ'ասացիր նորա
 Պակասութիւնը... Սակայն այս անգամ
 Դու չես ազատուիլ իմ ճիրաններից...

(Փայլատակումներ. լայտնում է Ողին ձերունու կերպարանքով):

Երեսյթ IV

ՄԱՆՆԱ ԵՒ Ո՞ՐԻ

Ո՞ՐԻ

Փրփրած, չուղած, մռնչող ծովի,
 Յորդալից, կատղած, վազող գետերի,
 Հողմակոծ, հեծող, խիտ անտառների,
 Վիթխարի, ձիւնոտ, հսկալ լեռների,
 Աշխարհի հըղօր վե՛հ ինքնակալիդ,
 Մե՛ծ, աշխարհաշէ՛ն և գեղեցկասէր
 Արքայից արքայ Մաննալին ողջոյն:

ՄԱՆՆԱ

Ասա՛, ո՞վ ձերուկ, եկել ես դարձեալ
 Իմ ասպարանքը աւերել տալու,
 Թէ եկել ես այն գոմաբանելու:

ՈԳԻ

Ո՛վ մեծ թագաւոր, քո ապարանքը
Մեծ է, փառաւոր, որպէս անունդ.
Նորա պարխազը հաստատ է, ամուր,
Որպէս քո հրդօր, մեծ պետութիւնը.
Նորա սիւները կանգնեն են, տոկոն,
Որպէս անվեհեր քո գինուորները.
Նորա տանիքը վեհ է, հաստատուն,
Որպէս երկնքի բարձր կամարը...

ՄԱՆՆԱ

Իսկ նորա փնչը, գեղեցկութիւնը:

ՈԳԻ

Գեղեցիկ է աչն և հիանալի,
Որպէս ապագայ վարդազոյն լոյսը:

ՄԱՆՆԱ

Ուրեմն չունի էլ պակասութիւն:

ՈԳԻ

Աշխարհիս վերայ ամեն կատարեալ
Ու լիակատար կատարելութիւն
Կարօտ է դարձեալ կատարելութեան,
Եւ ամենայն մի առաւելութիւն
Կարօտ է դարձեալ առաւելութեան
Ամեն վեհափառ բարձր վեհութիւն
Կարէ առաւել վեհափառ լինել.
Ամենայն մի շուք և ամեն մի փալ
Կարող է լինել աւելի պայծառ...

ՄԱՆՆԱ

Բայց քնչ միջոցով և քնչ հնարքով
Կարող եմ ես իմ չքեղ պալատը
Աւելի շքեղ ու պայծառ դարձնել,
Ի՞նչով կարող եմ թերին լրացնել:

ՈԳԻ

Դու խորհրդակցիր քո ողջ պետութեան
Իմաստունների և քրմերի հետ,
Թո՛ղ նորանք ասեն քո ապարանքի
Պակասութիւնը... Ողջ լեր, տէր արքայ:

ՄԱՆՆԱ

Սպասիր, ո՛վ ծերուկ. ես հրամայում եմ,
Որ ինքըդ ասես պակասութիւնը:

ՈԳԻ

Ո՛վ աշխարհակալ, հզօր թագաւոր,
Քո ոտքի տակ է աշխարհը բոլոր.
Սաստիկ և անեղ քո հրամաններից
Դողում են մարդիկ, սոսկում ամեն տեղ.
Քեզ միշտ հնազանդ է հողը և ջուրը,
Հնազանդ է նաև օդը և հուրը.
Սակայն մենք երբէք չենք հրնազանդում
Նրկրի հողեղէն վեհապետներին:

ՄԱՆՆԱ. (բարկացած)

Ինչպէս... Ապրում ես դու իմ աշխարհում
Դեռ չանդգնում էլ ես չը հնազանդումք

Իմ հրամաններին... Ես քեզ կը ստիպեմ,
Եղկելի ծերուկ...

ՈԳԻ

Թող բարկութիւնըդ,
Թող այդ քո ունայն ըսպառնալիքը.
Ես հպատակ չեմ Մաննա արքային,
Եւ չեմ բնակուում նորա աշխարհում.
Ունիմ ես անեղ և անմատչելի
Մի այլ հայրենիք, այլ ծննդավայր,
Որից ստսկում է աշխարհը բոլոր,
Որից ստսկում է ցեղը մարդկային...

(Փայլատակումներ և որոտմունք)

Ոչ մի հողեղէն դեռ չէ լանդզնել
Մերձեկնալ ազատ իմ հայրենիքին.
Իսկ թէ պատահմամբ կամ լանդզնութեամբ
Մօտեցել է մի մարդկային էակ—
Հրաժեշտ է տել իսկույն իր կեանքին...

(Փայլատակումներ և որոտմունք)

Դեռ մահկանացուն ստքը չի դրել
Անմերձեկնալի մեր հողի վերայ
Հայրենիքիս մէջ ազատ մուտք ունի
Միայն մարդկային միտքը սաւառնող...

ՄԱՆՆԱ

Ասա՛, որտեղ է քո հայրենիքը:

ՈԳԻ

Իմ հայրենիքը ալստեղ է, այնտեղ
Այլ և ամեն տեղ:

ՄԱՆՆԱ

Ծննդավայրըդ:

ՈԳԻ

Անհասանելի, բարձր և ազատ
Մասեաց լեռների մութ անդունդները...
(Փայլատակումներ և որոտմունք)
Այնտեղ է ահա իմ անմատչելի
Եւ անքննելի ծննդավայրը.
Այնտեղ են լինում հարազատ, ազատ
Իմ ծննդակից հօրը քաջքերը...
(Մաննան ստրասկում է)

Բաց մի երկնչիւր, թագաւորները
Չը պէտք է երբէք սոսկան ու զողան...
Բնաւ չեմ եկել քեզ վնաս տալու
Կամ քեզ տանելու մեր անդունդները:
Եկել եմ քեզ մօտ, որպէս բարեպաշտ
Ու պատկառելի ալևոր մի մարդ...

ՄԱՆՆԱ (ծնկաչոք)

Աղաչում եմ քեզ, օ, պաղատում եմ,
Մի մերժիր խնդրեմ իմ ցանկութիւնը.
Ինքըդ ասացիր, որ զու եկել ես,
Որպէս բարեպաշտ ալևոր մի մարդ.
Ուրեմն պահ մի եղիր, որպէս մաւր,
Մարդկային բոլոր արժանիքներով,
Մարդկային սրտի բարութիւններով:

ՈԳԻ

Ո՛հ, մենք չարութիւն երբէք չենք անում—

Մենք հալածում ենք Հարութիւնները:

ՄԱՆՆԱ.

Քո բարութիւնը ես չեմ մոռանալ,
 Կը մնամ ընդ միշտ քեզ երախտապարտ,
 Եթէ ինձ ասես իմ ապարանքի
 Թերութիւնները: Այն, ինչ որ դու միշտ
 Հեռատես աչքով կարող ես զիտել,
 Այն, ինչ որ դու միշտ անհուն եթերից
 Կարող ես տեսնել, քննել, հասկանալ—
 Վեր է մարդկային կարողութիւնից:
 Այն զաղտնիքները, որ դու կարող ես
 Ինձ լաւ բացատրել ու պարզաբանել—
 Իմ ողջ պետութեան իմաստունները,
 Բոլոր քրմերը, ձեռնարկները,
 Չեն կարող երբէք այնպէս բացատրել.
 Ո՛հ, ասան, ցոյց տուր իմ տան պակասը...
 Տես, թաղաւորն է ծնկաչոք խնդրում...

ՈԳԻ

Ո՛վ, Մաննա, Մաննա, քեզ չէ վայելում
 Ծնկաչոք խնդրել... Բաց բաւ է, կասեմ:—
 Նախկին պայտաղ դու աւերեցիր
 Եւ մի շքեղը միայն շինեցիր.
 Երկրորդը դարձեալ դու աւերեցիր
 Ու մի երրորդը հրաշակերտեցիր.
 Բաց կեղեցկագեղ և քո հիասքանչ
 Նոր հեղբի համար պակաս է միայն
 Հազարան-բլբուլ անգին թռչունը...

ՄԱՆՆԱ.

Այդ ինչ թռչուն է, ինչի համար է:
 ՈԳԻ

Երբ նա երգում է, լերկ ապառաժը
 Իսկոյն ծաղկում է, իբրև բուրաստան:
 Իսկ չոր ու խոպան գետինը լանկարժ
 Ծածկում է սիրուն մետաքսէ խոտով:
 Երբ երգում է նա, երկնային բոլոր
 Փետրաւորները և անտառալին
 Երգիչ հաւքերը լուռ են իսկոյն
 Եւ պահնջ դնում դիւթւած, հմայած
 Նորա մեղանոյշ, քաղցր գեղգեղին:
 Երբ երգում է նա, դառամեալ ձերը
 Իսկոյն մանկանում, նոր կեանք է առնում.
 Իսկ մեռելները նորա դալւալից
 Կենդանանում են, լարութիւն առնում:
 Երբ երգում է նա, անշունչ անդգալ
 Քարերը իսկոյն շունչ են ստանում:

1001
1914

ՄԱՆՆԱ. (հիացած)

Այդ ինչ օքանչելի, հրաշալի թռչուն:
 ՈԳԻ

Եթէ նա երգի խաւար գիշեր
 Իսկոյն երկինքը կը շառագոյն
 Արևի ոսկէ ճառագայթներով.
 Իսկ եթէ երգի դաժան ձմեռը,
 Իսկոյն կը բացւի պայծառ դարունը,



Վարդը կը բացւի, ծառը կը ծաղկի:
Նորա դալլալից, անուշ գեղգեղից
Ու հաղար տեսակ կլկլոցներէց
Իսկոյն անցնում է մարդկային սրտի
Բուռըն զայրոյթը և բարկութիւնը.
Իսկ փոթորկալոյզ ու փրփրբրագէղ,
Մռնչող ծովը մի ակնթարթում
Իսպառ հանդարտում ու մեղմանում է..

ՄԱՆՆԱ (հիացած)

Քայց ասան, խնդրեմ, որտեղ է լինում
Այդ հրաշայի, անգին թռչունը—
Ես բերել կը տամ նորան իմ տունը:

ՈԳԻ

Եթէ նա բերւի քո ապարանքը—
Կը լինի քո տան մեծ զարդարանքը:

ՄԱՆՆԱ

Իսկ որտեղ է նա, որտեղ է լինում:

ՈԳԻ

Նա քնակում է շատ ու շատ հեռու,
Անմերձեանալի անտառի խորքում.
Նորան գտնելը շատ դժւարին է,
Իսկ ճանապարհը խիստ վտանգաւոր..

(Որոտմունք. Ոգին անլուրտանում է)

Երեւոյթ V

ՄԱՆՆԱ (մենակ)

Գնաց... չքացաւ... խօսքը չաւարտեց...
Եթէ որ իրօք աշխարհիս միջին
Կայ մի այդպիսի հազուադիւտ երգիչ,
Էլ ում համար է նա աշխարհ եկել,
Թէ որ Մաննայի տանը չի լինիլ:
Ի՞նչ կ'ասեն մարդիկ, եթէ իմանան,
Որ իմ պալատում պակասում է մի
Այդպիսի անգին, հրաշալի թռչուն.
Էլ ի՞նչ եմ անում բարձր անունս
Եւ արքայական փառք ու պատիւըս,
Եթէ ես նորան ինձ մօտ չը բերեմ.
Էլ ի՞նչ եմ անում իմ թագն ու գահը
Անհամար գանձը, հարստութիւնը,
Թէ արքայական ապարանքիս մէջ
Չը պիտի լինի շաղարան-բլբուլ.
Շաղարան-բլբուլ... Ահա գաղտնիքը:
Եւ այսքան տարի մենք տանջուում էինք,
Չ'իմանալով մեր արքայական տան
Այդ խոշոր ու մեծ պակասութիւնը:
Ա՛խ, եթէ գտնեմ, ձեռք բերեմ նորան,
Աշխարհիս բոլոր թագաւորները
Ինձ կը նախանձեն, երանի կը տան:
Բայց... Նա ինձ ստաց, որ ձեռք բերելը
Շատ դժւարին է, իսկ ճանապարհը
Խիստ վտանգաւոր... Սակայն միթէ իմ
Պետութեան միջին չի ճարւիլ մէկը,

Որը մարտնչի արդեւքների դէմ
 Ու շահի իր մեծ արքայի սիրարք:
 Սիրելի որդիք, պալատականներ,
 Շուտ հաւաքեցէք, եկէք դուք այստեղ:
 (Մտնում են արքայորդիները և պալատականները)

ԵՐԵՄՅԱԹ VI

ՄԱՆՆԱ, ՀՐԱՆՏ, ՊԱՐԷՏ, ՍՈՒՐԷՆ և պալատա-
 կաններ

ՄԱՆՆԱ

Գաղտնիքը բացեց, սակայն թէ քնչպէս—
 Այդ թող ձեզ համար դեռ մնայ անզայտ:
 Այսքանը կ'ասեմ, որ ի՞նչ տան համար
 Պակաս է միայն Հաղարան-բլրուլ,
 Հասկանում էք լաւ, Հաղարան-բլրուլ...
 Եւ առանց նորան՝ տունրս կաւերսի,
 Քար քարի վերայ չի կարող մնալ:
 Մենք առանց նորան՝ չենք կարող սարքել
 Այ հանդէս, ոչ տօն և ոչ էլ խրախճանք...
 Ողջ երգիչների թագուհին է նա,
 Հրաշալիքների մեծ հրաշալիքը:
 Երգում է նա միշտ մեղնից շատ հեռու,
 Անմերձենալի անտառի խորքում:
 Նորան գտնելը, նորան ճարելը
 Շատ դժուարին է, իսկ ճանապարհը
 Խիստ վտանգաւոր, դուցէ և անկղ
 Ու սարսափելի... Հիմա ասացէք,
 Ո՞վ է ձեզանից անվեհեր ու քաջ,

Որ կարողանայ կուռել, մաքառել
 Արգելքների դէմ, ձեռք բերել նորան...
 (Ս.մ.ն.քը լուռ են)

Ո՞վ է ձեզանից ամենից արին,
 Ամենից սրտոտն ու քաջագործ,
 Թո՛ղ նա առաջ դաչ և ինձ մտռենայ:
 (Ս.մ.ն.քը լուռ են)

Իմ հաւատարիմ պալատականներ,
 Իմ խոնարհ, չլու և անվախ քաջեր,
 Ով որ ձեզանից ձեռք բերի, ճարի
 Ինձ համար անդին բլրուլ-սոխակին,
 Ես կը պարզեմ նորան մարգարտէ
 Եւ լակնթակապ սիրուն վարսակալ:
 Կը տամ ես նորան թանկագին գինտեր:
 Գեղեցիկ կարած մի կարմիր կօշիկ:
 Կը տամ իրաւունք ճա, վայելելու
 Ոսկէ գդալով, սպասուաքաղով:
 Կը տամ իրաւունք գինի ըմպելու
 Պատուական, շքեղ ոսկէ դաւաթով:
 Կը տամ իրաւունք բարձակից լինելի,
 Իմ ներկալու թեամբ բարձին թէք ընկնել...
 Կ'ընծայեմ նորան ամբողջ մի գաւառ,
 Պատական, ընտիր ձիերի մի ջոկ
 (Ս.մ.ն.քը լուռ են)

Ո՞վ է ձեզանից սքաւարաստ զոհելու
 Իր բարեխնամ արքայի համար,
 Թո՛ղ նա առաջ դաչ և ինձ մտռենայ:

ՄԻ ՊԱՆՍԱԿԱՆ

Ողորմած արքայ, մենք բոլորեքեան
Միշտ պարտաւոր ենք անձնըւիրութեամբ
Մեր անձը դո՛նեկ արքայի համար...
Բայց մի գործ, որի չաջողութիւնը
Սննդուսալի է և կատկածելի...

ՄԱՆՆԱ (բարկացած)

Անհաւատարիմ, վախկոտ արարած.
Եւ դո՛ւ ես կոչուծ պալատիս միջին
Առաջին մարդը ու իմ աջ թեք...
Միթէ դու չէիր, որ քո նիղակով
Ատորոց զօրքի հրամանատարի
Լերդն ու թոքը հանեցիր կրծքից.
Դո՛ւ չէիր արդեօք, որ երկու ձեռքով,
Որսի ժամանակ առիւծ խեղդեցիր
Եւ խորտակեցիր կատգած վարպէ՛
Սուր ժանիքները. Եւ այսօր չանկարծ
Խօսում ես ինձ հետ, իբրև մի վախկոտ,
Իբրև մի չնչին ու թնյլ նապաստակ...
Այսօր այդ չնչին, թուլ նապաստակի
Վզից կը կապի աճաղին մի քար,
Կը նեաւի անտակ Բղնունեաց ծովի
Հողմակոծ, ահեղ ալիքների մէջ...

ՍՈՒՐԷՆ

Հանր, մի բարկահար. ես չանձն եմ առնում
Աշխարհս շրջել, որոնել, գտնել
Քո ցանկացածը. Խոչնդոտների

Եւ արդելքների ես ճիրաններից
Կ'աշխատեմ մի կերպ դուրս կորզել ուղած
Անգին թռչունդ:

ՀՐԱՆՏ (տանձին)

Անմիտ, անտեղի,

Մեծ չանդդու՞թիւն.

ՊԱՐԷՏ (Սուրէնին)

Դեռ դու շատ անխորձ,

Անհեռատես ես. ինքդ չը դիտես՝
Թէ ո՛ւր ես դնում և ինչո՞ւ համար:

ՍՈՒՐԷՆ

Թէ ո՛ւր եմ դնում և ինչո՞ւ համար—
Արդէն մեր հայրը կարծեմ սեղ չայտնեց...

(Հրանտն ու Պարէտը հեղհօրէն քրքջում են)

ՄԱՆՆԱ.

Այն չայտնեցի:

ՍՈՒՐԷՆ

Եւ ես դնում եմ:

ՀՐԱՆՏ (հեղնելով)

Բարի ճանապարհ:

ՊԱՐԷՏ (հեղնելով)

Բարով լիտ դառնաս:

ՍՈՒՐԷՆ

Կամ լեռ կը դառնամ կամ կը չքանամ.
 Եւ մեր պալատում կամ մահիս դուռը
 Ողբը կը հնչի, կամ թէ Հաղարան
 Անգին բլբուլի քաղցր մեղեդին...
 Դէ, մնաք բարեան...

ՄԱՆՆԱ. (համբուրելով Սուրենին)

Դէ, գնան բարեան. թող աստածները
 Օրհնեն քո ուղին: Մաղթում եմ ես քեզ
 Բարի վերադարձ և լաջողութիւն.
 Դնան, մաքառիր վտանգների դէմ,
 Ժառանգիր անմահ հերոսի անուն,
 Ե՛կ, ուրախացրու ծերունի հօրդ
 Ժառանգիր նորա հաստատուն զահր:

(Սուրենի փոքր հեռանալուց լեռով)

Սուրէն, ախ, արի մէկ էլ համբուրեմ...

(համբուրում է Սուրենին. Սուրենը հեռանում է)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐԻԱԺ

Առաջին պատկեր

Լեռներ, դաշտ և երեք ճանապարհ

Նյւնայթ I

ՀՐԱՆՏ (Լեռներում)

Սմբողջ մէկ ամիս ես թափառեցի,
 Երկար շրջեցի, հարց ու փորձ արի—
 Ոչ ոք չը գիտէ բլբուլի տեղը:
 Էւ ես գիտէի, որ անօգուտ է
 Իմ որոնելը: Ես չեմ կարծում, որ
 Ազգային թաշտն լինի աշխարհում:
 Այն ո՛վ է զալիս... Օ՛, իմ հղբակը:
 Սիրելի Պարէտ, հղբակը իմ Պարէտ,
 Հը՞, գտնո՞ր թէ ոչ:

ՊԱՐԷՏԻ ԶԱՅՆՔ

Չը կայ, ո՛չ, չը կայ...

(Երևում է Պարէտը. երկու եղբայրները համ-
 բուրում են)

Երևոյթ II

ՀՐԱՆՏ ԵՒ ՊԱՐԷՏ

ՀՐԱՆՏ

Արդէն ձանձրացայ ես թափառելուց:

ՊԱՐԷՏ

Իսպառ լողնեցի, լուսահատուեցի.

Ամեն տեղ հարցրի—չըկա՛ ու չըկա՛.

Բաւ է մեղ, եղբայր, ինչքան տանջեցինք,

Վերադառնանք տուն:

ՀՐԱՆՏ

Տուն, ինչ երեսով.

Ուղում ես իսպառ խալտառակ լինենք,

Մնանք ամօթով մեր հօր առաջին,

Որ աշխարհը մեզ ծաղրի, ծանակի:

ՊԱՐԷՏ

Ի՞նչ պիտի անենք, ուրեմն լաւէտ
Թափառենք ի դուր:

ՀՐԱՆՏ

Ա՛յ, կարծում եմ.

Մենք սև երեսով չենք կարող գնալ

Մեր հօր պալատը. այլ պիտի դարձեալ
Ընկնենք սար ու քար, որոնենք երկար
Թէպէտ չեմ կարծում ցանկալին գտնենք,
Սակայն մենք դարձեալ պիտի որոնենք,
Որ լեա չը մնանք կրտսեր եղբօրից:

ՊԱՐԷՏ

Իսկ եթէ չանկարծ պատահենք դելի,

Որը մեր դիւխն մի փորձանք բերի.

Կամ թէ պատահենք անել վիշապի,

Որ ազահաբար չանկարծ լարձակի

Ու մեղ կլանի:

ՀՐԱՆՏ

Շատ էլ լաւ կ'անի,

Էլ ինչ պէտք ունինք երկար ապրելու:

Բայց, դարձեալ գնանք, չրջենք, որոնենք.

Իսկ թէ չը գտնենք—էլ տուն չենք դառնալ:

Կը գնանք հեռու մի օտար աշխարհ,

Ուր մէկտեղ կ'ապրենք, մէկտեղ կը մեռնենք:

ՊԱՐԷՏ

Ա՛յ, մեր պարծենկոտ, անմիտ Սուրէնն էր

Մեր տարագրութեան միակ պատճառը:

ՀՐԱՆՏ

Ի՞նչ պէտք էր արած. քանի որ անխորձ

Ա՛յն շողքորթը մենակ կամեցաւ

Գըրաւել մեր հօր համակրութիւնը,
 Վայելել նորա լարդանքն ու սէրը.
 Անքան բազմութեան առաջ կամեցաւ
 Յոյց տալ մեր հօրը անհեթեթ, անմիտ
 Անձնըւիրութիւն: Երբոր այդպիսի
 Մի ողորմելի, այդպիսի զժուծ,
 Վախկոտ մի մանուկ խոստում է անում
 Չեռնարկել մենակ մի կասկածելի,
 Մի անյուսալի, վառագաւոր դործ—
 Էլ չէինք կարող մենք տանը նստել:

ՊԱՐԷՏ

Եթէ մնայինք մենք տանը նստած,
 Եւ Սուրէն ի զուր որոնելուց լետ՝
 Տուն վերադառնար ունայն ձեռներով...

ՀՐԱՆՏ

Այդ միկնայն է, դարձեալ նա պիտի
 Ժառանգէր մեր հօր, զանը բարձրանար:

ՊԱՐԷՏ

Դէ, քնչ ես ասում, այժմ քնչ անենք:

ՀՐԱՆՏ

Ահա մեր առջև երեք ճանապարհ.
 Արի, սիրելիս, այստեղ բաժանուենք:
 Ապափնելով մեր աստածներին,
 Իւրաքանչիւրս մի ուղի ընտրենք

Եւ շարունակենք մեր թափառելը.
 Թէպէտ լոյս չը կալ, սակայն ո՞վ զիտէ...
 Դէ, մնաս բարեաւ, սիրելի Պարէտ:
 Ես կ'երթամ ուղիղ առաջին ճամբով:
 Թէ ողջ ու առողջ մենք վերադառնանք,
 Կ'աշխատենք դարձեալ հանդիպել իրար:

ՊԱՐԷՏ

Իսկ ես գնում եմ այս երկրորդ ճամբով...
 Բարբ՛ ճանապարհ, իմ սիրելի Հրանտ...

(Եղբայրները համբարելով, հեռանում են
 իրանց ընտրած ճանապարհներով: Փոքր ինչ
 յետոյ մտնւմ է Սուրէնը:)

Երկուրդ ԻՊ

ՍՈՒԻԷՆ (մենակ)

Այ՛ո, մինչև այժմ ապարդիւն անցաւ
 Իմ բոլոր ջանքը, բայց կարծես սիրտըս
 Վըկալում է, որ զուր չէ անցնելու
 Իմ թափառելը. անայտ, զաղտնի ոյժ
 Կարծես անդադար առաջ է մղում
 Ու ինձ մօտեցնում կէտ նպատակիս:
 Ա՛խ, երանի էր թէ՛ իմանալի
 Բլբուլի տեղը... Բայց ո՞վ է զալիս
 Լեռան լանջերով հանդարտ քայլերով.
 Գուցէ մոլորւած մի ճանապարհորդ,
 Կամ բաղդախնդիր մի շար ստահակ...
 Ով կուզէ լինի—այստեղ կը սպասեմ...
 (Երևում է Ողին)

Երևոյթ IV

ՍՈՒՐԷՆ ԵՒ ՈԳԻ

ՈԳԻ

Ո՛վ դու, հողեղէն, ինչ ես որոնում
Այս մերկ լեռներում:

ՍՈՒՐԷՆ

Հաղարան-բլրուլ,
Որ տանեմ Մաննա արքայի համար:

ՈԳԻ

Հաղարան-բլրուլ, այ՛ն, լսել եմ...

ՍՈՒՐԷՆ

Բարի ձերունի, ասան, խնդրում եմ՝
Որտեղ կարող եմ ես այն ձեռք բերել:

ՈԳԻ

Բայց դա չափազանց դժւարին գործ է:

ՍՈՒՐԷՆ

Է՛հ, ես կը լաղթեմ այդ դժւարութեան,

Միայն թէ ասան թռչունի տեղը:

ՈԳԻ

Պիտի գնաս այս երեք հակառակ

ձանապարհներից մէկի ուղղութեամբ:

ՍՈՒՐԷՆ

Հակառակ... որն է այս ուղիների
Տարբերութիւնը:

ՈԳԻ

Ո՛վ որ առաջին
Ուղիով գնայ, նա լետ կը դառնայ:
Ո՛վ որ այս երկրորդ ճամբովը գնայ—
Կամ լետ կը դառնայ կամ լետ չի դառնալ:
Իսկ ո՛վ որ գնայ երրորդ ուղիով
Էլ լետ չի դառնալ:

ՍՈՒՐԷՆ

Բայց ինչ պատճառով:

ՈԳԻ

Ահն, որ այս երրորդ ճամբան է տանում
Հաղարան-բլրուլ թռչունի վայրը:

ՍՈՒՐԷՆ

Ի՞նչպէս վարեմ, որ գնամ ու լետ դամ:

ՈԳԻ

Պէտք է մաքառես արգելքների դէմ:
Գէթ մինչև այժմ, ո՛վ գնացել է
Այս ճանապարհով, միշտ նա է լաղթել,
Կեանքիցը զրկւել, չքացել իսպառ:

ՍՈՒՐԷՆ

Ես էլ պատրաստ եմ կեանքից զրկւելու
Իմ ձեռուն ազարդ հօր սիրուն համար:

ՈԳԻ

Մեր ասուածները գուցէ քեզ պէս քաջ,
Անձնութիւն որդուն խղճան, խնայեն...
Ուրեմն գնան երբորդ ուղիով,
Գուցէ թէ բաղդը ծայտայ քեզ պէսին...

ՍՈՒՐԷՆ

Կարճիկ ես արդեօք բաղդս գուշակել:

ՈԳԻ

Կարծեմ թէ մասամբ ես գուշակեցի:

ՍՈՒՐԷՆ

Ուրեմն գնամ ուղիդ այս ճամբով,
Որքան էլ լինի նա վտանգւոր,
Հոգ չէ ինձ բնաւ... Բայց ինձ թուում է,
Բարի ձեռունի, դու շատ բան գիտես.
Չես կարող արդեօք տալ ինձ մի քանի
Բարի խորհուրդներ:

ՈԳԻ

Եթէ կատարես...

ՍՈՒՐԷՆ

Օ՛ կը կատարեմ ամեն սրբութեամբ,
Եւ բարութիւնըդ ես չեմ մոռանալ:

ՈԳԻ

Բարութիւնները միշտ մոռացում են:
Սակայն բարութիւն անողի համար
Այդ միեւնոյն է. իսկ բարիքները
Չեն սնւում երբէք լիչւելու համար...
Դէ, լսի՛ր ասեմ, ո՛վ քաջ պատտնի,
Երբ երկար գնաս այդ ճանապարհով,
Քեզ կը հանդիպի ահաւոր մի գետ,
Ջուրը դառնալից, աղի ու զաղի՛ր,
Յորդ, փրփրաղէ՛ղ և սահանքաւոր,
Եթէ կամենաս աճփորձ, անվտանգ
Անցնել կատաղի այդ գետի միջով—
Խմի՛ր այն դառը, գարշելի ջրից
Ու բացագանչի՛ր. «Ա՛խ, որքան անուշ,
Որքան բարեհամ ու սառնորակ ջուր»:

ՍՈՒՐԷՆ

Այո՛, կը խմեմ... կ'ասեմ. գասն՛քեզ
Անմահական ջուր:

ՈԳԻ

Ա՛յ, հէնց այդպէս:
Երբ գետը կ'անցնես—կը տեսնես մի ջուր,
Փշալից անտառ, լի զազաններով,
Թունաւոր, ահեղ ու սեւ օձերով:
Եթէ կամենաս առանց փորձանքի
Անցնել սոսկալի անտառի միջով
Պիտի դու քաղես փշեր ու տատակ

Եւ հոտոտելով՝ ծաղիկ համարես,
Ասես բարձրաձայն. «ի՛նչ հոտաւէտ է»:

ՍՈՒՐԷՆ

Կը քաղեմ, ալո՛, և կ'ասեմ. «կարծես՝
Թփից նոր կարած անուշ վարդ լինի»:

ՈՂԻ

Եւ երբ անվրտանդ դուրս դաս անտառից —
Կը տեսնես ծառից դու կապած մի խոյ,
Իսկ մի ալլ ծառից կատաղի առիւծ.

Առիւծի առաջ կը տեսնես դու խոտ,
Եւ խոյի առաջ մի պատաս թարմ մրս.

Միսը կը վերցնես, առիւծին կը տաս,
Խոտը կը դնես խոյի առաջին,

Ապա քո ուզին կը շարունակես:

Երբ դնաս առաջ և քեզ հանդիպի
Փառաւոր դարպաս, որի մէկ դուռը
Կը լինի փակած, իսկ միւսը բացւած.

Բացը կը փակես, փակը կը բանաս

Ու Ներս կը մտնես մի կանաչ անտառ:

Կը տեսնես քնած մի չքնաղ փերի,

Աւ նորա հանդէպ ակնազարդ վանդակ,

Որի մէջ երգում ու հաղար տեսակ

Չափներ է հանում Հաղարան-բլբուլ

Թռչունը անգին: Նորա դիւթական,

Անուշ գեղգեղից ննջում է փերին

Ամբողջ մի եօթնեակ, եօթն օրից լետոյ

Չարթնում է նորից...

(Որտամունք. Ողին անյայտանում է: Այլած Սուրէնը
գնում է երրորդ ճանապարհով):

Երկրորդ պատկեր

Դարպաս, որի մէկ դուռը բաց է, միւսը փակ:
Շքեղ ու փարթամ ծառաստան. գոյնզգոյն ծաղիկ-
ներ, շատրւան և աղբիւր: Փերին կիսամերկ քնած
է. նորա հանդէպ ծառի ճիւղից կախած է ոսկէ
վանդակ, որի մէջ երգում է Հաղարան-բլբուլ:

(Դարպասից մտնում է Սուրէնը, փակ դուռը բանա-
լով, իսկ բացը փակելով)

Երեսույթ I

ՓԵՐԻ ԵՒ ՍՈՒՐԷՆ

ՍՈՒՐԷՆ, (դմալւած)

Երգիր, ախ երգիր, աննման երգիչ,

Գու իմ ցանկալի Հաղարան-բլբուլ...

(Հաղարան-բլբուլը լռում է).

Ինչո՞ւ լռեցիր, Էր ընդհատեցիր

Այդ կախարդական անուշ դալլալը:

Գուցէ զարմացար, որ այս կուսական

Անմերձեհալի անտառի խորքը

Յանդգնեց մտնել մարդկալին էակ...

Օ՛, շարունակիր քաղցր մեղեգիդ.

Գուցէ չես ուզում դու արժանացնել

Քո անուշ երգի գեղ հնչիւններին

Ինձ նման գողին ու աւազակին:

Ալո՛, եկել եմ քեզ գողանալու,

Սակալն ո՛չ բնաւ քեզ վնաս տալու:

Կը տանեմ ետ քեզ շքեղ, փառահեղ
Մեր արքայական մեծ ապարանքը,
Կը շրջապատեմ շուքով ու փալլով,
Միշտ կը փաշփայեմ և կը գուրգուրեմ:
Կը սփռեմ ես քո առաջ մարգարիտ,
Յակիրնթ ու գոհար, ալուենք անհամար:
Կը տամ ամեն օր անուշ վարդաջուր,
Ընտիր հատիկներ, համեղ կերակուր:
Դու կը զարդարես մեր ապարանքը,
Իսկ մենք կը գովենք քո գեղգեղանքը:
Մարդիկ թո՛ղ լսեն ձայնըդ գեղանի,
Մաննա արքային թո՛ղ տան երանի...
(Տեսնելով Փերիին)

Իրականութիւն, թէ սոսկ մի երանգ...
Օ՛ դու աննման, չքնաղ զիցուհի,
Մանուշակների, նունուֆարների,
Վարդերի դու զարդ, հըմալիչ Փերի...
Քանի որ կան քո ալդչափ հրաշալի,
Նախշուն ունքերը—ինչո՞ւ համար է
Երկնակամարի գեղ ծիածանը:
Եւ երբ որ ունիս զիւթական դէմքիդ
Պայծառ շող ու փալլ—ինչո՞ւ համար է
Ոսկէ արևը, արծաթ լուսինը:
Քանի ժպտում են ծիրանի, նախշուն
Քո շրթունքները—ինչո՞ւ են բացում
Հոտաւէտ վարդի ալ թերթիկները:
Թո՛ղ իմ դողդոջուն ալրուղ շրթունքք
Թողնի անարատ, սնքիծ երեսիդ
Մի փոքրիկ նշան, իբրև իմ սրտի,

Անձկարեաց սրտի, սիրոյ գրաւական...
(Զգուշութեամբ համբուրում է Փերիին)
Ոչինչ չ'իմացաւ... քնած է անուշ...
Ծերունին ասաց՝ ամբողջ մի եօթնեակ
Քնում է Փերին սոխակի անուշ
Դալլալիկներից, եօթն օրից լետոյ
Զարթնում է քնից... Սոխակը լուռ է,
Դուցէ թէ լանկարծ զարթնի զիցուհին:
Թերևս ալսօր լրանում է արդէն
Եօթներորդ օրը... Լաւ է հեռանամ...
(Զգուշութեամբ վերցնում է վանդակը և հի-
ցած նայում Փերիին.)
Քայց քնչպէս թողնեմ ես այս գեղահրաշ,
Աննման կոյսին. սրպէս մոռանամ
Սորա հմալիչ, զիւթիչ պատկերը,
Եւ առանց սորան էլ ինչիս են պէտք
Աշխարհի կեանքը և բարիքները...
Ոչ, ես կը մնամ, կը մնամ ալստեղ,
Մինչև որ զարթնի սա անուշ քնից:
Եւ երբ կը զարթնի, ծունկ կը խոնարհեմ
Սորա երկնային գեղութեան առաջ
Եւ լաց ու թացով ես կը համբուրեմ
Քղանցքի ծայրը ու սէր կը հացեմ...
Քայց քնչպէս մնամ, չէ՞ որ խեղճ հալըս
Աչքը միշտ ճամբին ըսպատում է ինձ,
Սպասում է և անգին սոխակին:
Քայց կթէ Փերին զարթնի ու տեսնի,
Յափշտակել են քաղցբախօս երգչին—
Որչափ կը տխրի և կը վշտանայ...
Գնամ թէ մնամ...

ՈԳՈՒ ԶԱՅՆԸ

Գնան, սիլ Սուրէն:

ՍՈՒՐԷՆ (սպշած)

Իմ ծանօթ, բարի ծերունու ձայնը...

Սակալն ուր է նա...

ՈԳՈՒ ԶԱՅՆԸ

Գնան, սիլ Սուրէն:

ՍՈՒՐԷՆ

Իսկ քննչպէս թ՛ղնեմ այս չքնաղ կոյսին:

ՈԳՈՒ ԶԱՅՆԸ

Նա ինքը կը գայ սրտիդ տիրելու—

Սոխակն ու վարդը անբաժան են միշտ.

Բնա է, շտապիր: Զարթնում է Փերին:

Քեզ ճանապարհին վտանգ է սպասում,

Բայց մի վախենար:

ՍՈՒՐԷՆ

Դէ մնան բայեաւ...

(Վանդակը ձեռքին՝ հեռանում է շտապով)

ԵՐԵՆՈՅԹ II

ՓԵՐԻ (շարթնելով)

Խօլ երազները հանգիստ չը տւին:

Բոլոր ժամանակ ես տանջւում էի...

Կարծես՝ աչևոր անհղ մի ծերուկ

ձգնում էր ջնջել, կործանել իսպառ.

Իմ անտառային իշխանութիւնը.

Կարծես՝ մի հզօր, քաջ երիտասարդ

Մտել էր այստեղ, իմ օթեանը՝

Եւ կամենում էր կուրծքս պատառել,

Կուսական սիրտըս միջից դուրս կորզել.

Եւ ես օգնութեան կանչեցի իմ քաջ

Ու հաւատարիմ պահապաններին,

Բայց ամենն ի զուր. կարծես՝ թէ ոչ ոք

էլ չէր կամենում հնազանդելու ինձ.

Բոլորը կարծես՝ թողել էին ինձ

Ու դաւաճանել իրանց տիրուհուն...

Բայց քննչ բան է այս. դէմքս այլուում է,

Եւ կարծես՝ մէկը խարոյկ է վառել

Իմ այտի վերայ... Գնամ, լւացւում

Սառնորակ ջրով ու քիչ զովանամ:

(Մտանալով աղբերին, իր պատկերը տեսնում է ջրի մէջ և սարսափում)

Ա՛խ, համբուրի հետք... Մարդկային այլուող

Շրթունքների հետք: Ո՞ր մահկանացուն

Յանդղնեց մտնել իմ մենարանը

Ու թողնել արատ անարատ դէմքիս...

(Ցանկարձակատում է, որ Հաղարան-բլուրը չը կառ)

Անուշ բլբուլս, անդին սոխակս...

Անկարելի է, անկարելի է.

Ոչ, չեմ հաւատում ես իմ աչքերին...

Գուցէ քնած եմ— և զեռ տնում է

Իմ սարսափելի, անհղ երազը...

Բայց ոչ, տարեւ են... Յափշտակեւ են...
 Հազարան-բլթոււ, Հազարան-բլթոււ,
 Որտեղ ես, ձայն տուր, իմ անգին թռչուն.
 Միթէ թռել ես, փախել ինձանից,
 Բայց չէիր կարող թողնել ինձ մենակ,
 Որովհետեւ դու սիրում էիր ինձ.
 Գու ամանայն օր ծլվլում էիր
 Անուշիկ տաղով ինձ օրօր ասում,
 Օրհնում էիր մեր մտերմութիւնը,
 Անասման սէրը, ընկերութիւնը.
 Կլկլոցներով ելեէջներով
 Ու հազար տեսակ գեղգեղանքներով
 Ձարդարում էիր կանաչ անտառը
 Եւ սքանչացնում բոլոր աշխարհը:
 Ոչ, չէիր կարող թողնել ինձ մենակ—
 Յափշտակեւ են, վանդակով տարեւ...
 Սակայն ո՞ր էին պահպաններս.
 Բայց նախքէ ան՝ դարպասի փակած
 Գուռը բացել են, իսկ բայը փակել...
 Այս ո՞վ թափանցեց գաղտնիքներն մէջ...
 (Կանգնում է դարպասի մօտ և բարձրաձայն
 կանչո՞ւմ)
 Ա՛յ, քաղցած առիւծ, բռնիր այն գողին,
 Սուր ժանիքներով պատառօնք նորան,
 Լափիր, կշտացիր դու նորա մտով.
 Եթէ քնած ես, թող ձայնի խորը
 Ու քեզ արթնացնի: Օ՛, փշոտ անտան,
 Փուշ ու տատասկով ծակիր, լօշոտօնք
 Այդ աւազակի բոլոր մարմինը:
 Ո՛վ դուք, կատաղի, վայրագ գազաններ,

Գիշատեցէք շուտ նորա մարմինը,
 Ներկեցէք հողը կարմիր արիւնով:
 Գուք, սարսափելի թռնաւոր օձեր,
 Խալթեցէք նորա բոլոր մարմինը,
 Ձեր դառը թռչնով չքայրէք իսպառ:
 Եւ դուք, փրփրալից, կատաղած ջրեր,
 Խեղդեցէք նորան ձեր դառը, աղի
 Յորձանքների մէջ և ազատեցէք
 Բաղջը բլթուլիս... Բայց ձայն չէ լսում,
 Չէն հնազանդում իմ հրամաններին...
 Գաւաճանեւ են, դաւաճանեւ են
 Ամենքը, այն, թողել ինձ մենակ...

(Լալիս է)

Երազս կարծես շուտով կատարեց—
 Կուրծքըս պատառում, աչրում է սաստիկ,
 Եւ սիրտըս կարծես ուղում է թռչել,
 Թռչել իմ կրծքից, սլանալ հեռու,
 Գէպի այն քաջը, որ չափշտակել,
 Տարել է չքնաղ, անգին սոխակիս...
 Այն, նա քաջ է, քաջ ու հնարագետ.
 Եթէ որ լինէր սովորական մարդ,
 Կամ թէ հասարակ մի մահկանացու—
 Նա չէր չանդգնիլ անցնել ասաւոր
 ձանապարհները ու ոտքը դնել
 Անմերձենալի անտառիս միջին...
 Համբուրել է ինձ... Նա ինձ սիրում է...
 Ա՛յ, գնամ, գնամ, որտե՞ն նորան...
 Այն, գնում եմ... Բայց ո՞ր եմ գնում:
 (Որտո՞մնք, երևում է Ոգին)

Երևոյթ III

ՓԵՒԻ ԵՒ ՈԳԻ

ՈԳԻ

Գնահ, հիլ Փերի, ես քեզ կ'ազեկեմ:

ԵՐՐՈՐԴ ԵՐԱՐԻԱԺ

Խնջուք Մանուշի պալատում,

Երևոյթ I

ՄԱՆՆԱ, ՀՐԱՆՏ և ՊԱՐԷՏ. ՈՒՐԱՐՏԻԻ, ՄՈՒ-
ՍԱՍԻՐԻ և ՄԻԼԴԻՍԻ ՊԱՏԳԱՄԱՆՈՐՆԵՐ. քրմեր,
պալատականներ և գուսաններ:

Ք. ՄԱՐ (Երգելով)

Օ', Պարնիս, Հալդիան, Տիասպանս,
Արքային երկար կեանք ու օր տաս.
Յարաժամ թող լինի նա լաղթող,
Որ սփռէ թշնամուն ահ ու գող:
Արամնզղ, Անահիտ ու Նանէ,
Արքայի զաւակաց զու պահէ,
Որ նոքա միշտ լինեն քաջազօր,
Մեծ գործով թնդացնեն սար ու ձոր:

ՈՒՐԱՐՏԻՒ ՊԱՏԳԱՄԱՆՈՐ

Ուրարուի Հայոց մեծ պետութիւնը

Այսօր հրճանքով մասնակցում է այս
վեհ ու փառաւոր տօնախմբութեան,
Շնորհաւորում է Մաննա արքայի
Քաջ որդիներին վերադառնալը,
Հաղարան-բլուռ սոխակի դալը:

ԳՈՒՍԱՆՆԵՐ (երգելով)

Կեցցէ արքան, կեցցէ լուէտ,
Կեցցէ քաջ Հրանտ, կեցցէ Պարէտ.
Դէ, եղբայրներ, գինի ածէք,
Մեր քաջերին դուք օրհնեցէք:
Մեր քաջերը մահը տւին
Չար վիշապին ու չար դէին,
Մեր պալատի ջահը բերին,
Տւին Մաննա մեծ արքային:
Վարդը բերին, փուշը տւին,
Փուշը տւին, դուշը բերին.
Ա՛յ, Հաղարան անգին դու զո՛ւշ,
Գալըդ բարի, երգըդ անուշ:

ՄՈՒՍԱՍԻՐԻ ՊԱՏԳԱՄԱՌՈՐ

Շատ բաղաւոր եմ զգում ինքս ինձ,
Որ Մուսասիրի պետութեան կողմից
Վիճակեց երկու անգամ այցելել
Մեծազօր Մաննա արքայի հողը:
Առաջին անգամ, մը տարի առաջ՝
Եկել էի, որ մասնակից լինեմ
Այս նորակառուց պալատի առթիւ

Սարքոյ հանդիսին. բայց ասուածներէ՝
Տնօրինութիւնն ուրիշ կերպ եղաւ.
Եւ տխուր սրտով, սակաւն բաղաւոր,
Ես վերադարձայ իմ հայրենիքը:
Մի տարուց լետու, այս երկրորդ անգամ՝
Արժանի եղայ Մաննա արքայի
Հիւրասիրութեան: Շնորհաւորում եմ
Արքայի որդոց վերադառնալը,
Հաղապիւտ երգիչ սոխակի գիւտը:

ՄԻԼԴԻՍԻ ՊԱՏԳԱՄԱՌՈՐ

Այսօր այս տանը կայ երեք տեսակ
Տօնախմբութիւն: Առաջին տօնը
Անւանում եմ այն, որ այս պալատը
Էլ չի աւերւիլ նախկինների պէս,
Կը մնայ կանգուն շատ ու շատ դարեր:
Որովհետեւ էլ թերութիւն չ'ունի.
Պակասութիւնը անգին սոխակն էր,
Որ ալժամ անա բերեցաւ այստեղ:
Երկրորդն ալն է, որ քաջ Մաննայի
Քաջ որդիները այսօր շղջ, առողջ
Տուն վերադարձան, մխիթարեցին
Ծերունի հօրը և անմահացրին
Իրանց անունը ամբողջ աշխարհում:
Երրորդը ալն է, որ ըսքանչելի,
Աշխարհահռչակ անգին բլուրը
Չարդարեց այսօր այս շքեղ տունը
Եւ փառք ու պարծանք բերոււ այս աշխարհօ:

Այսօր հայազնեայ պետութիւնների
Շնորհաւորանքին, բարեմաղթութեան
Թող միանան և նւաստիս բերնով
Միլղիս աշխարհի ջերմ կեցցէները:

ՔՐՄԵՐ (Էրզելով)

Օ՛, Պարնիս, Հալղիւն, Տիասպան,
Արքային երկար կեանք և օր տաս:
Արամազդ, Անահիտ ու Նանէ,
Արքայի զաւակաց դու պահէ:

ՄԱՆՆԱ

Շատ շնորհակալ եմ իմ ան թանկագին
Աղնիւ հիւրերից, որոնք մասնակից
Եղան այսօրւայ իմ ուրախութեան:
Թող մեր այսօրւայ խինդ ու բերկրանքը
Լինի լաւտեան մի առհաւատչեայ
Հայոց աշխարհի թագաւորների
Բարեկամութեան ու մտերմութեան:
Թող աստածները օրհնեն մեր կապը,
Օրհնեն բոլորիս սուրբ միութիւնը:
Բաց պէտք է ասեմ, որ մեր այսօրւայ
Տօնամբբութիւնն աւելի շքեղ
Աւելի փայլուն, աւելի ուրախ
Կը լինէր, եթէ չը բացակայէր
Իմ Սուրէն որդին... Ա՞՞վ գիտէ՝ հիմա
Ի՞նչ փորձանք եկաւ զաւակիս գլխին.
Արդեօք ո՞ղջ է նա, առնղջ է որդիս,

Թէ որոնելով անգին սոխակին՝
Մատնել է անձը դառը տանջանքի.
Կամ թէ, մի գուցէ լիջել է արդէն
Սառը գերեզման...

ՊԱԼԱՏԱԿԱՆ

Ողորմած արքայ,
Մի տխրիլ այդպէս. մեծ է Արամազդ.
Նորա զօրութեամբ կը վերադառնայ
Մեր արքայորդին:

ՔՈՒՐՄ

Բարեպաշտ արքայ,
Ես գուշակել եմ, որ Սուրէն որդիդ
Կը վերադառնայ, կը գայ հայրենիք:

ՀՐԱՆՏ (առանձին)

Լաւ ես գուշակել...

ՊԱՐԷՏ (առանձին)

Լաւ է, եթէ գայ...

ՀՐԱՆՏ

Հայրիկ, մի տխրիլ. եթէ Սուրէնը
Իմանայ, որ մենք արդէն գտել ենք
Հազարան-բլրու անուշ սոխակին—
Կը վերադառնայ, կը գայ հայրենիք:

ՄԱՆՆԱ

Քացի դորանից, թանկագին հիւրեր,
 Պէտք է ձեզ ասեմ, որ մեր այսօրւայ
 Տօնախմբութիւնն աւելի շքեղ
 կարող էր լինել, եթէ Հաղարան
 Անգին բլթուլը իր անուշ երգով
 Լրացնէր այսօր մեր խրախճանքը:
 Այս քանի՜ օր է, որ փայտալուծ ենք,
 Առաջը սփռում լակիկն ռ. գոհար,
 Լալ ու մարգարիտ, ընտիր հատիկներ,
 Եւ տալիս նորան համեղ կերակուր,
 Քաղցր վարդաջուր, սակալն չէ երգում:

ՀՐԱՆՏ

Օ՛, կ'երգի, հալրիկ, մի փոքր սպասիր.
 Դեռ չի սովորել, չի ընտելացել
 Իր այս նոր կեանքին և մեր աշխարհին:

ՔՈՒՐՄ

Ես դուշակել եմ, որ նա շատ շուտով
 Իր անուշ երգի քաղցր դալլալով
 Պիտի թնդացնի մեր արքունիքը,
 Եւ ուրախացնի մեր թագաւորին:

ՄԱՆՆԱ

Երնէկ այն ժամին... Դէ, ուրախացէք
 Շարունակեցէք ձեր խնդութիւնը:
 Ճիշտ է, սակաւիկ թէպէտ արբեցի,

Քայց ոչինչ. անցաւ սրտիս թախիծը:
 Անուշիկ իմ Հրանտ, սիրելի Պարէտ,
 Չէ՛ք կամենալ հիւրերի առաջ
 Մէկ էլ պատմելու՝ թէ քնչպէս գտաք
 Անգին սոխակին. թնդ մեր հիւրերը
 Մանրամասնաբար լսեն բոլորը,
 Եթէ որ միայն ձանձրութ չի լինիլ
 Ձեր պատմութիւնը...

ՀԻՒՐԵՐ

Ընդհակառակը.
 Ուրախ կը լինենք, պատմեցէք. քաջեր.
 (Մտնում է սպասուորը)

ԵՐԵՆՈՅԹ II

ՆՈՐԱՆՔ ԵՒ ՍՊԱՍԱԻՈՐ

ՍՊԱՍԱԻՈՐ

Մեծադօր արքայ, օտար աշխարհից
 Եկել է այստեղ ձերուկ բանաստեղծ՝
 Երկար զգեստով, ձերմակ մօրուքով՝
 Յանկանում է, սէր, ներկայանալ քեզ:

ՄԱՆՆԱ

Խնդրիր, թող ներս գալ. ես միշտ սիրում եմ
 Բանաստեղծներին:

(Սպասուորը դուրս է գնում. մի փոքր լստույ մտնում է
 բանաստեղծը):

Երևոյթ III

ՆՈՐԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Ծովի, ցամաքի
 Վեհ ու մեծափառ, հզօր, ինքնակալ
 Մաննա արքային խոնարհ ողջնա:
 Օտար աշխարհում բուռն հրճանքով
 Լսեցի վեհիդ քաջ որդիների
 Վերադառնալը և երգիչների
 Քաղցրախօս երգիչ՝ բլբուլի զիւտը—
 Անցալ լեռները, խորխոր ձորերը
 Եւ լանդզնեցի գալ քո երկիրը,
 Անարժան բերնով ձայնս միացնել
 Այսօրւայ տօնի խնդութեան ձայնին,
 Յանկալ Մաննային արեշատութիւն,
 Յարատև օրեր ու երջանկութիւն:

ՄԱՆՆԱ

Շատ շնորհակալ եմ, սիրելի երգիչ,
 Իմ տան դռները միշտ բաց են եղել
 Սուրբ զեղարևտտի սպասաւորների
 Առաջ: Բայց ասան, ո՞վ ես և ուսկի՞ց:

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Տէր, զեղարևտտը հայրենիք չ'ունի:

ՄԱՆՆԱ

Քայց էլի ասան, որտեղ ես ծնել:

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Ծնել եմ այնտեղ, ուր որ իշխում է
 Եւ թագաւորում ճշմարտութիւնը:
 Ուր ճշմարտութեան լուր բանում է
 Մարդկային խաւար ու կոյր աչքերը:
 Ուր մերկանում է ստոր կեղծիքը:
 Ուր արդարութեան ձայն է միշտ հնչում,
 Որտեղ զեղեցկի վեհ գաղափարն է
 Ամեն ժամ տիրում...:

ՄԱՆՆԱ

Է՛հ, շատ լաւ, շատ լաւ:

Ով էլ որ լինես—պատուական հիւր ես
 Պալատիս միջին: Դէ, այժմ լսիր
 Իմ որդիների պատմութիւնները...
 Գուցէ և նորանց քաջութիւնները
 Կը փառաբանես քո երգերի մէջ...
 Դէ, սկըսիր, շրանտ, մենք քեզ լսում ենք:

ՀՐԱՆՏ

Երբ մենք դուրս եկանք մեր հայրենիքից,
 Մի քանի ամիս տարագիր եղանք:
 Շատ թափառեցինք, ընկանք սար ու քար,
 Հարց ու փորձ արինք, բայց բոլորը զնւր:
 Եւ մի երեկոյ, երբ մի խոր ձորում

Լուռ նստած էինք ու հանդատանում—
 Տեսանք այնոր փորձած մի հովիւ,
 Որ իր խաչները տանում էր գիւղը.
 Երբ մենք խօսեցինք բլբուլի մասին—
 Հովիւը սոսկաց, սարսափից դողաց,
 Խնդրեց, աղերսեց, որ թողնենք անդ.
 Ու մեր լանդուզն մտադրութիւնը,
 Որ մեզ խնայեցնք և չը մատնենք մեր:
 Անձը վտանգի ու փորձանքներով...

ՊԱՐԷՏ

Իսկ մենք ժպտացինք ծերունու վերայ
 Եւ ըստիպեցինք՝ ցոյց տալ այն ուղին,
 Որը տանում էր Հաղարան-բլբուլ
 Սոխակի տեղը:

ՀՐԱՆՏ

Այ՛ր, ժպտացինք
 Եւ ստիպեցինք՝ ցոյց տալ այն ուղին:

ՄԱՆՆԱ

Է՛հ, լեռո՛յ, լեռո՛յ:

ՀՐԱՆՏ

Յոյց տաւ ուղին.
 Հէնց այն խոր ձորով, ուր հանդիպեցինք
 Ալեոր հովիւն, պիտի շարունակ
 Առաջ գնայինք: Առաջ գնացինք,
 Երկար գնացինք, սնցանք սար ու քար,
 Եւ մեր առաջին բացեց մի քարսր...

ՊԱՐԷՏ

Մի սարսափելի և մնթը քարայր:

ՀՐԱՆՏ

Այ՛ր, անաւոր և մնթը քարայր.
 Մտանք քարայրը ու փորսող տալով՝
 Առաջ գնացինք և տեսանք հեռում
 Մենք փոքրիկ մի լոյս. Իէպի այն լոյսը
 Փորսող տեցինք, և անա բացեց
 Մեր առաջ մի մուտք: Հէնց որ այդ մուտքից
 Ելանք լոյս աշխարհ—լեռներ ու ձորեր
 Յանկարծ թնդացին, և հնչեց լանկարծ
 Ահարկու մի ձայն... Եւ քնչ եմ տեսնում—
 Ահաելի, հոսկիւ, անագին վիշապ,
 Որ՝ բերանը բաց, աչքերը չուած՝
 Կատաղած, փրփրած՝ վաղեց դէպի մեզ...

ՊԱՐԷՏ

Աչքերից կրակ էր թափում անդադար,
 Իսկ լայն բերանից—բոցեր ու շանթեր:

ՀՐԱՆՏ

Մի ակնթարթում ես ու Պարէտը
 Հանեցինք երկար մեր սուր թրերը
 Եւ լորձակեցինք վիշապի վերայ...
 Չ'անցաւ շատ միջոց—մեր հարածներից
 Ես՝ արիւնաշաղ ու թաաղլոր՝
 Ընկաւ անդունդը և շունչը փչեց...

ՀԻՒՐԵՐ

Կեցցէ՛ քաջ Հրանտը, կեցցէ՛ քաջ Պարէտը

ՀՐԱՆՏ

Ապա փառք տւինք մեծ Արամազդին,
Շարունակեցինք մեր ճանապարհը,
Թէ շատ գնացինք, թէ քիչ գնացինք—
Այդ լաւ չեմ չիշում: Յանկարծ տեսնում եմ
Յօթնդիւանի ահագին մի դև,
Ամեն մի ուսին եօթը հատ սև օձ:
Գեղ քնած էր, իսկ սև օձերը՝
Գլուխները ցից՝ պահապանի պէս՝
Արթուն աչքերով հսկում էին, որ
Կարևոր փամին զարթեցնեն նորան...

ՊԱՐԷՏ

Հէնց որ մեզ տեսան, իսկոյն ֆշշացրին,
Չարթեցրին դէին, որ մռնչալով՝
Յարձակեց, վազեց, եկաւ դէպի մեզ...

ՀՐԱՆՏ

Իսկոյն հանեցի սուրբս պատեանից
Եւ մի հարածով կտրեցի դէի
Երկու գլուխը...

ՊԱՐԷՏ

Եւ էլ զարկեցի

Եւ մի հարածով կտրեցի նորա
Երեք գլուխը...

ՀՐԱՆՏ

Գարձեալ մի հարունձ—

Եւ իսկոյն թոցրի նորա մնացած
Երկու գլուխը... Յանկարծ ինչ տեսնեմ՝
Ամեն մի կտրած գլխի փոխարէն
Բուսել են նորից եօթը-եօթը հատ
Ուրիշ գլուխներ: Այդ իսկ բոպէին
Սկսեցի դարձեալ զարկել, հարածեւ,
Կտրատել բուսած նոր գլուխները.
Իսկ մեր Պարէտը խարոյկ էր վառել,
Բերում էր շուտ-շուտ վառած դերաններ,
Կրակով ալրում, դաղում չար դէի
Գլխի տեղերը, որ էլ չը բուսնեն:
Երբ հեռոյնէս դըր թուլացաւ,
Եղաւ ուժասպառ և արիւնքամ,
Գցեցինք նորան վառ խարոյկի մէջ
Եւ իր պահապան սև օձերի հետ
Արեցինք իսպառ ու մոխիր զարձրինք...

ՈՒՐԱՐՏԻՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Այդպիսի մի մեծ քաջագործութիւն
Կեռ ոչ տեսել ենք և ոչ էլ լսել:

ՄԱՆՆԱ

Է՛հ, ևտոյ, ևտոյ—խօսքըդ վերջացրու:

ՀՐԱՆՏ

Յետոյ մենք տեսանք մի մաւրլ անդունդ...

ՊԱՐԷՏ

Մապլ անդունդ չէր, այլ բարձր մի սար...»

ԲԱՆԱՍՏԵՂՆ

Այդ միևնույն է, այդ միևնույն է:

ՀՐԱՆՏ

Ոչ, սխալում է Պարէտ եղբայրը—
Մապլ անդունդ էր, ոչ թէ բարձր սար:

ՄԱՆՆԱ

է՛հ, վերջը՞, վերջը՞...

ՀՐԱՆՏ

Իջանք անդունդը

Եւ տեսանք աչտակ տասը ածղահայ,
Մարապիելի հլէչ, որոնք պահպանում
Ու պահում էին այն ստորերկրեայ
Քաղաւորութեան քարէ դարպասը,
Որը տանում էր Հաղարան-բլրու
Քաջունի տեղը... Հէնց որ մեզ տեսան
Աժդահաները—սուր ատամները
Կրճըտացնելով՝ վաղեցին մեզ մօտ:
Ես ու Պարէտը իսկույն պոկեցինք
Մի-մի քարածալօ, Նեաեցինք լանկարծ
Հրէշների վերայ և մի անգամից
Տասնին էլ իսկույն մահացրինք իսպառ...
Ապա փշրեցինք ուժգին հարւածով

Քարէ դարպասը, ծառուղիներով
Առաջ գնացինք... Տեսանք մի պալատ,
Մտանք նորա մէջ: Աւ հէնց որ մտանք
Նքեղ դահլիճը—լսեցինք լանկարծ
Մի անուշ դալլալ... և ինչ եմ տեսնում—
Պատուհանի մօտ ոսկէ վանդակում—
Երգում, ծլվում ու հազար տեսակ
Կլկլացնում է անգին բլբուլը...

ՊԱՐԷՏ

Իսկույն վեր առանք ոսկէ վանդակը
Եւ եկած ճամբով դարձանք, հասանք տուն:

ՀԻՐԲԵՐ

Կեցցեն մեր քաջ Հրանտ, անվեհեր Պարէտ...»

ԳՈՒՍԱՆՆԵՐ (ԵՐԳԵԼՎ)

Մեր քաջերը մահը տւին,
Մեր պալատի ջահը բերին.
Մահը տւին—ջահը բերին,
Չահը բերին—մահը տւին:
Վարդը բերին—փուշը տւին,
Փուշը տւին—ղուշը բերին.
Ա՛յ, Հաղարան անգին դու զո՛ւշ,
Գալըդ բարի՛, Էրգոդ անուշ:

ՄԱՆՆԱ (ՍՐԴՊ)

Երկուսդ էլ ապրիք. ինչպէս խնդացրիք

Դուք ձեր հօր սիրտը, աջնպէս էլ, որդիք
 Ամեն ժամանակ ձեր սիրտը խնդալ.
 Թող աստուածները օրհնեն ձեր կեանքը:
 Ձեր քաջութիւնը, անձնւիրութիւնը
 Բարի օրինակ թող լինեն մարդկանց:
 Թող ձեր անունը զարդարի ընդ միշտ
 Հայոց աշխարհը, ինչպիս զարդարեց
 Այսօր իմ տունը Հազարան-ըլբուլ
 Անդին սոխակը: Եւ այսուհետեւ
 Բոլոր աշխարհը հասկանալ, որ իմ
 Քաջ որդոց համար չը կալ անհնարին
 Եւ դժուարին բան... Բոլորի առաջ
 Այսօր իջնում եմ սեփական դահից
 Եւ հրաժարում եմ իմ ոսկէ թագից:
 Այս թագն ու դահը ձեզ է պատկանում,
 Ամբողջ երկիրըս ձեզ եմ նըւիրում.
 Ողջ պետութիւնս ես բաժանում եմ
 Ձեր երկուսի մէջ—Հրանտը կը լինի
 Արեւելքի աէր, իսկ Պարէտ կ'իշխի
 Ողջ արեւմուտքին...

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Ողորմած արքայ,
 Այս հանդիսաւոր մեծ տօնի առթիւ
 Թող տուր ասեմ մի վիպասանութիւն,
 Որ ես հիւսել եմ այս օրուայ համար:

ՄԱՆՆԱ

Ուրախ կը լինես:

ՀԻՒՆՐ

Ասա, խնդրում ենք:

ԲԱՆԱՍՏԵՂԾ (արտասանելով)

«Յանկարծ վեհափառ արքան ալևոր
 Գարձաւ ցաւազար, տկար ու անզօր.
 Հազար միջոցներ, բժիշկ ու դարման
 Անկարող եղան բուժելու նորան:
 Եւ նա տանջւում էր դարմանի կարօտ,
 Երբ մի իմաստուն եկաւ նորա մօտ.
 Խղճաց արքային և ասաց նորան,
 Որ նա բերել տալ ջուր անմահական:
 Բայց ով սիրա կ'անէր բերել այդ դեղը—
 Վտանգւտ էր այն ջրը ի տեղը.
 Իսկ ճանապարհը լի էր օձերով,
 Չար ողինքով ու գազաններով:
 Չուր բերող չը կար... Տանջւում էր արքան.
 Ախար մաշում էր, քայքայում նորան:
 Ունէր նա երեք որդի քաջարի՝
 Երկուսը շատ չար, երրորդը բարի:
 Եւ բարի որդին խղճաց հիւանդ հօր,
 Չէնքերն աւաւ, ընկաւ սար ու ձոր:
 Եւ սե ամօթից ու չար նախանձից
 Մեծ եղբայրներն էլ դուրս եկան տնից.
 Շատ թափառեցին, չըջեցին երկար,
 Բայց անմահական ջուրը դեռ չը կար:
 Եւ երբ երկինքը, որպէս կարմիր ծով,
 Վաղ առաւօտեան բռնկեց բոցով:
 Երբ արեգակը լեւուր վեր ելած՝

Ոսկէ շողերը սփռեց դէպի ցած —
 Երկու չարաննեղ եղբայրները վատ
 Անտառի խորքում նստան լուսահատ:
 Եւ այդ միջոցին լանկարծ երևաց
 Երրորդ եղբայրը՝ սափորը բռնած.
 Նա իր հիւանդ հօր դարմանը ձեռին՝
 Ուրախ մօտեցաւ իր եղբայրներին...»

ՀՐԱՆՏ (յուզած)

Հայր, բաւական է. խիստ շատ երկարեց
 Ոտանաւորը:

ՄԱՆՆԱ

Ո՛չ, ո՛չ, թող ասի:

ԲԱՆԱՍՏԵՂԾ (շարունակելով)

«Բայց եղբայրների սրտում գութ չը կար.
 Նոցա սրտերը դարձել էր լեռ-քար.
 Նոցա նախանձը և չարութիւնը
 Մոռացնել տըւաւ իրանց արիւնը.
 Մոռացան նոքա հարազատ եղբօր,
 Մոռացան միշտը ծերունի խեղճ հօր:
 Եւ չը վախեցան ո՛չ աստածներից,
 Ո՛չ խղճի խալթից, ո՛չ դատաստանից:
 Նախանձը, որպէս մի օձ թունաւոր,
 Խալթում էր նոցա սիրտը նենգաւոր:
 Եւ չը խղճացին անմեղ եղբօրը,
 Բռնեցին, տարան, գցեցին հորը...»

ՊԱՐԷՏ (յուզած)

Անկարելի է, անկարելի է:

ՀՐԱՆՏ

Բաւական է, հայր, հրամայի՛ր, լռի...»

ՄԱՆՆԱ

Ո՛չ, ո՛չ, ո՛չ, թողէ՛ք, որ շարունակի,
 Այդ ինձ համար շատ հետաքրքիր է:

ԲԱՆԱՍՏԵՂԾ (շարունակելով)

«Եւ խորը հորից եղբայրը թշուառ
 Ողբաձայն կանչեց, աղաչեց երկար,
 Որ խղճան, փրկեն, ազատեն իրան —
 Բայց եղբայրները ունկընդիր չեղան:
 Հորի բերանը քարով ծածկեցին,
 Սափորն առան և տուն դիմեցին,
 Երբ եկան հօր մօտ, խաբեցին նորան,
 Ասացին՝ մենք ենք ձարել քո դարման...
 Եւ նենգ որդիքը դէմքով պարծենկոտ
 Ջուրը մատուցին արքային ցաւոտ.
 Երբ խմեց արքան այն ջուրըն անդին,
 Իսկույն ազատեց ցաւից դառնազին,
 Եւ հօր արքան իր որդոց օրհնեց,
 Իր ապարանքում մեծ հանդէս սարքեց:
 Հիւրերի առաջ նենգ որդիները
 Սկսեցին պատմել շինծու վէպերը —

Թէ ինչպէս նորա ոտնատակ տւին
Ահեղ վիշապին, ամենի դէին...
Եւ կեղծ ու պատիր քաջութիւններին
Հրճուած էր արքան սրտի խորքերին...»

ՀՐԱՆՏ (յուզած)

Երբէք չի կարող այդ բանը լինել
Այդ մի յօրինուած, սնւտ պատմութիւն է...

ՊԱՐԷՏ (յուզած)

Սնւտ, կեղծ պատմութիւն, սոսկ զրպարտու-
թիւն...

ՄԱՆՆԱ

Օ', մի խանդարէք, թող շարունակի
Սիրելի երգին, արդեօք չե՞ս լինում
Այդ հիանալի բանահիւստութեան
Դու այն հատուածը, որտեղ խօսուած է
Հորի մէջ գցւած թշուառի մասին...
Ինչո՞վ վերջացաւ նորա վիճակը...
Արդեօք աղատուեց, նա արժանացաւ
Իր հօր տեսութեան... կեղծիքը բացուեց...

ԲԱՆԱՍՏԵՂԾ (շարունակելով)

«Երբ սարի գլխին ժպտաց արևը,
Աշխարհին տաւ վերջին բարեւ—
Այն ջրհորի մօտ եկաւ մի ծարաւ,
Բարեպաշտ, զթոտ գիւղացի պառաւ:
Եւ լսեց լանկաչի հրէի խորքերին

Հառաչանք ու լաց և ողբ դառնալից,
Բացաւ ջրհորի քարած բերանը,
Իջեցրեց ներքև ջրի պարանը:
Եւ աստածներին նա ոյժ խնդրելով՝
Քաշեց, դուրս հանեց, ոսկրոտ ձեռներով:
Աղատեց թշուառ արքայի որդուն,
Որդեգրեց նորան ու տարաւ իր տուն:

ՄԱՆՆԱ (ուրախ)

Ա'խ, միթէ, միթէ աղատուեց հօրից.
Փնուք Արամազդին... Հետաքրքիր է,
Ընդ միշտ նա մնաց պառաւի տան մէջ,
Թէ լիտոյ գնաց հայրական տունը.
Միթէ չը գիտէր, որ կարօտ հալը
Ապասուած էր իր կորած դաւակին:

ԲԱՆԱՍՏԵՂԾ (շարունակելով)

«Եւ նա ապրում էր պառաւի տան մէջ,
Յիշում իր հօրը, կարօտում անվերջ:
Եւ լսեց, որ իր հալըը ալևոր
Կաղմել է հանգէս, խնջուք փառաւոր.
Արձակուրդ խնդրեց բարի պառաւից,
Ճանապարհ ընկաւ, դուրս եկաւ գիւղից.
Հասաւ քաղաքը, բանաստեղծ դարձաւ,
Մտաւ արքունիք, հօր ներկայացաւ...»

ՄԱՆՆԱ (կասկածանքով)

Քանաստեղծ դարձաւ... Հօր ներկայացաւ...

ՀՐԱՆՏ (բարկացած)

Դու լաւ կ'անէիր՝ վիրաւորական
Ոտանաւորըդ չ'արտասանէիր.
Եկել ես ալտեղ մեղ խնդացնելու,
Թէ անմեղ մարդկանց վիրաւորելու:

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Եւ դու կարծում ես կեղծ է սասձըս:

ՊԱՐԷՏ (բարկացած)

Այո՛, կեղծ է, կեղծ, միանգամայն կեղծ...

ՀՐԱՆՏ

Եթէ որ կեղծ չէ, ո՞ր է քո փաստը...

ԲԱՆԱՍՏԵՂԾ (նետելով երեսի դի-
մակը և վերնազգեստը)

Ահա՛ և փաստը...

(Ամենքը տեսնելով, որ բանաստեղծի փո-
խարէն Սուրէնն է կանգնած իրանց առաջին
մնում են ապրած):

ՄԱՆՆԱ

Ա՛խ, Սուրէն, որդիս...

(Հայր և որդի գրկախառնում են)

Ուրեմն պատմած քո պատմութիւնը
ձշմարտութիւն է... Նենգ եղբայրներըդ
Դաւաճանել են, խլել բլրուլին,
Գցել քեզ հորը ու խարել հորը...

(Հայրացած)

Այլ ևս չունեմ ես Հրանտ ու Պարէտ
Անունով որդիք... Մեռան ինձ համար...
Դու էլ Հրանտը չես, Դու Պարէտը չես.
Մանա արքայի որդիքը բնաւ
Ձեզ նման չէին—նոքա անարմատ,
Անբիժ ու բարի դաւակներ էին.
Իսկ դուք— վատ, խարդախ, չար աւազակներ,
Ստո՛ր, դարչելի, նենգ չարագործներ...
Հիւրերիս առաջ խայտառակեցիք
Իմ ալիքները, իմ ծերութիւնը...
Թող այսուհետեւ մարդիկ նախատեն,
Թքեն երեսիս, թո՛ղ անէժք թափեն
Ալկոր զլինիս և իմ արեիս,
Որ իմ արիւնից ծնունդ են առել
Ձեզ նման օձեր... Օ՛, երանի թէ
Ձեր մօր արգանդում չքանար իսպառ
Իր սաղմի միջին ձեր ժանտ ծնունդը...
Ես ձեզ կեանք տւի, ևս ձեզ չունչ տւի,
Բաց դուք իմ կեանքը թունաւորեցիք,
Օրըս սեպրիք... Մահ, մահ, դահիճներ...

ՀՐԱՆՏ ԵՒ ՊԱՐԷՏ (ծնկաչոք)

Ա՛հ, ներիք մեզ հայր...

ՍՈՒՐԷՆ

Հայր, ներիք նորանց.

ՄԱՆՆԱ (զայրացած)

Իմ արքունիքում, իմ հողի միջին

Չը պիտի երբէք լինի նենգութիւնս.
Ամեն չարագործ, ամեն ստահակ՝
Լինի նա որդիս, լինի եղբայրս,
Լինի մի զինուոր կամ թէ մի գեղջուկ—
Պիտի արժանի պատիժը կըբի...
Թող աշխարհ տեսնի, որ իմ գեղեցիկ,
Շքեղ պալատում չը պէտք է լինի
Ժանա տղեղութիւն...

ՔՈՒՐՄ

Բայց չէ որ, արքան,
Մեծանոգութեան գեղեցկութիւնը
Կը նսեմացնի ամեն լանցաւոր
Մի տղեղութիւն:

ՄԱՆՆԱ

Անդրդեւի է...

ՍՈՒՐԷՆ

Հնչիր, եղբայրներս, երբ ինձ գցեցին
Խորը հորի մէջ, որ ջնջեն իսպառ.
Կեանքս աշխարհից, գուցէ երջանիկ
Զգացին իրանց. սակայն ես դժբաղդ
Կը զգամ ինքս ինձ, եթէ որ զրկեմ
Իմ եղբայրներից... Խնդրում եմ, ներիր...

ՄԱՆՆԱ

Անդրդեւի է...

ԱՄԵՆՔԸ

Ներիր... ողորմիր...

ՄԱՆՆԱ

Անդրդեւի է իմ որոշումը...
(Որոտմունք. երևում է Ողին)

Երևոյթ IV

ՆՈՐԱՆՔ ԵՒ ՈԳԻ

ՈԳԻ

Թող բարկութիւնըդ, մեծագոր Մաննա.
Որդիքըդ շուտով կը կրեն պատիժ,
Կը կրեն պատիժ ոչ ի՛նչ քեզանից,
Այլ շրջապատող հանգամանքներից...
Շնորհաւորում եմ, երջանիկ արքան,
Քո գեղեցկագեղ պալատի մէջ է
Աշխարհահռչակ Հաղարան— բլրու
Անդին սոխակը: Շնորհաւորում եմ,
Երջանիկ Մաննա, քո հիանալի
Պալատի մէջ է աշխարհահռչակ
Ու երանաւէտ, բաղդաւոր փեսան:
Շնորհաւորում եմ, երջանիկ Մաննա,
Քո տան մէջ է և աշխարհահռչակ
Անուշ վարդերի ու շուշանների
Զքնաղ թագուհին, գեղահաշ Փերին...
(Յայտնում է Փերին. լսում է Հաղա-
րան-բլրուի երգը. ամենքը մնում
են ապշած).

Նըրևոյթ V

ՆՈՐԱՆՔ ԵՒ ՓԵՐԻ

ՈՂԻՍ

Դէ, երգիր, երգիր, քաղցրախօս երգիչ,
Հասաւ երգելուդ ցանկալի ժամը.

Օրհնիր քո երգով Մաննա արքային,
Օրհնիր քո չքնաղ թագուհու սէրը:

Ահա, թագուհի, աննման Փերի,

Ահա այն քաջը, Մաննա արքայի

Անվեհներ Սուրէն անձնազօճ որդին,

Որ չափշտակեց անդին բլբուլիդ,

Որ չափշտակեց ու տիրեց սրտիդ:

Դու ինքըդ այստեղ, բլբուլդ այստեղ,

Սոխակը այստեղ, իսկ ես ամեն տեղ...

Քաղցաւոր փեսան համբուրեց կուսին

Ու սիրոյ նշան թողեց երեսին...

(Սուրէնն ու Փերին գրկախառնուում են):

Դէ, օրհնիր, Մաննա, քո սրբոց սէրը:

Նոցա սուրբ կապը և միութիւնը:

(Սուրէնն ու Փերին շօքում են Մաննայի առաջ):

ՄԱՆՆԱ

Թող աստուածները օրհնեն երկուսիդ,

Տան ուրախ օրեր և երջանկութիւն.

Թող ձեր սերունդը բազմանայ, որպէս

Ծովի աւազը... Հանդիսականներ,

Ներկայացնում եմ ձեզ իմ պետութեան
Նոր թագաւորին և նոր թագուհուն...

ԱՄԵՆՔԸ

Կեցցէ, կեցցէ, կեցցէ...

ՄԱՆՆԱ

Սոխակը երգեց— զարույթս անցաւ,
Եւ այս փառաւոր, երջանիկ ժամին
Ներում եմ ես ձեզ, ո՛վ Հրանտ ու Պարէտ.

Յանձնում եմ միայն ձեր խղճի խալթին,
Թե՛ղ ձեր խիղճը լոկ լինի դատաւոր...

Սրբազան քրմեր, պատուական հիւրեր,
Պալատականներ, զէ՛, գինի՛ ածէ՛ք,

Խմենք ու խնդանք. և քառասուն օր,
Քառասուն գիշեր հարսանիք անենք:

Հնչեցրէ՛ք փողերն ու շփորները,

Ազդարարեցէ՛ք արար աշխարհին

Մաննայի որդու հաբօսանեաց լուրը:

Թող գանձապետը իմ պանծարանից

Հանի անհամար ոսկի ու զոհար,

Տեղացնի բոլոր իմ ազգի գլխին,

Շաղ տալ ու սփռի ամբոխի առաջ,

Որ ամենեքեան խնդան ու ցնծան

Արքայի որդու մեծ հարսանիքին...

ՍՈՒՐԷՆ (ՈՂԱՆ)

Բարի ծերունի, իմ բոլոր կեանքով,
Իմ երջանկութեամբ քեզ եմ պարտական.

Թէ չը լինէիր, չէի կարող ես՝
Անփորձ, անվտանգ՝ չաղթել արդեւքին,
Խոչնդոտներին, տիրել բլրուլին
Եւ սքանչելի, չքնաղ Փերիին:

ՄԱՆՆԱ. (Ողուն)

Ես ես միայն քեզ եմ պարտական,
Որ ես ձեռք բերի շքեղ պալատիս
Շքեղութիւնը: Երկար տարիներ՝
Վատնելով դանձա ու բարիքներս՝
ձիգ էի թափում հրաշակերտելու
Սքանչելութիւն. ես ձգտում էի
Հասնել գեղեցկի և դեղարեւատի
Կատարելութեան ու գաղափարին,
Որին և այսօր անա հասել եմ
Լոկ քո շնորհիւ...

ՈԳԻ

Այն, հասել ես.

Սակայն ոչ թէ իմ, այլ հասել ես քո
Եռանդի, ձիրքի, տաղանդի շնորհիւ:

ՄԱՆՆԱ.

Սակայն չէ որ դու...

ՈԳԻ

Ես ան չեմ, ինչոր
Առաջ ասացի. ես քո եռանդն եմ,
Քո ձիրքը և քո բարձր տաղանդը...
(Հնչում են շեփորները և փողերը):

ԱՄՆՆՔԸ

Կեցցէ, կեցցէ, կեցցէ...

ՎԵՐՋ

«Հաղարան-Բլրուլի» ներկայացման իրաւունքը վե-
րապահւած է հեղինակին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0339944

31,959